

2024

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փ.
թիվ 12 հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂՆ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՕՆ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փ. թիվ 12 հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՕՆ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. Իսպիրյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	9
1.5.1	<i>Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր</i>	9
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ</i>	15
1.5.3	<i>Իրավիճակային հատակագիծ</i>	16
1.5.4	<i>Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ</i>	19
1.5.5	<i>Ժամանակացույց</i>	22
1.5.6	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ</i>	23
1.5.7	<i>Ջեռուցում , հովացում և օդափոխություն</i>	24
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	27
2.1	Շինարարության պայմանները.....	28
2.2	Հիմնական աշխատանքների իրականացման մեթոդները	29
2.3	Շինարարության ժամկետները.....	30
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	30
2.5	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	31
2.5.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	32
2.5.2	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը</i>	33
3.	ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ	35
3.1	Կանաչ տարածքի ռոռգման ջրապահանջի հաշվարկ.....	37
3.2	Աղմուկ և թրթռում:.....	37
4.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	39
4.1	Կլիմայական պայմանները	40
4.2	Օդային ավազան.....	41
4.3	Ջրային ռեսուրսներ	42
4.4	Հողածածկ	43
4.5	Կենսաբազմազանություն.....	43
4.5.1	Բուսական աշխարհ	43
4.5.2	Կենդանական աշխարհ	44
4.6	Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	45
4.7	Պատմամշակութային հուշարձանների ցանկ.....	46
4.8	Թափոնների կառավարում	59

5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	60
5.1	Ռիսկերի գնահատում	60
5.2	Արտանետումների աղբյուրները	60
5.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	60
5.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	60
5.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	61
5.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	62
5.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	62
5.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i>	63
5.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i>	63
5.3.7	<i>Թափոնների կառավարում</i>	64
5.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	64
5.3.9	<i>Էներգախնայողության միջոցառումներ</i>	65
6.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	65
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	67
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	70
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	75
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	76

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ՕՆ ԴԻՉԱՅՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	ՀՀ Մարզ Արմավիր, ք. Մեծամոր 0910 /Ծ/10/18
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փ. թիվ 12 հասցե
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների և Վաղարշապատ քաղաքի «Մեսրոպ Մաշտոցի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համար կառուցել նոր, ժամակակից դպրոցի մասնաշենք: Դպրոցի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փ. թիվ 12 հասցեում:

Դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Վաղարշապատ համայնքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Վաղարշապատ համայնքում նախատեսվող դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Մահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է

մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.),

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.)

ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենդունված 2002 թվականի հունիսի 4-ին, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար՝ Վաղարշապատ քաղաքի «Մեսրոպ Մաշտոցի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի նոր շենքի » կառուցման նախագծի հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝

- Անշարժ գույքի սեփականության վկայականը՝ կադ. ծածկագիր 04-002-0093-0001
- Տեղամասի իրավիճակային հատակագիծը
- Շենքի տեխնիկական վիճակի մասին տրված եզրակացությունը
- Տեխնիկական վիճակի եզրակացություն հուշարձանի մասին, հաստատված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից
- Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմատիվային պահանջները
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքը
- Տեղում կատարված չափագրական գծագրերը

Հողատարածքի բնութագիր

- Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0093-0001
- Մակերեսի չափը / հա /՝ 0.5575
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ Սեփականություն

Վաղարշապատ քաղաքը գտնվում է Արմավիրի մարզում: Այն գտնվում է Երևան քաղաքից 20կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Արմավիրից քաղաքից՝ 24կմ հեռավորության վրա: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան գոգավորության սահմաններում, Քասաղ գետի ավազանում:

ՀՀ Վաղարշապատ քաղաքում գտնվող «Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի շենքը » կառուցվել է 1960- ական թվականներին տիպարային նախագծով: Նախատեսվում է գոյություն ունեցող դպրոցի շենքը քանդել հիմնովին և կառուցել նորը, ժամանակակից պահանջներին համապատասխան:

Քանդվող շինությունը տեղադրված է հարթ տեղանքի վրա, և բաղկացած է 6 երկհարկանի մասնաշենքերից:

Դպրոցի տարածքում կան նաև մեկ հարկանի կաթսայատան շինություն և պահեստային շինություն, որը նախատեսվում է նույնպես քանդել հիմնովին: Քանդման աշխատանքների արդյունքում առաջանում է մոտ 3850մ³ ծավալով շինարարական աղբ, որի տեղափոխման վայրը կհամաձայնեցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Շինությունները, որոնք գտնվում են դպրոցի տարածքում գրանցված չեն պատմամշակույթային հուշարձանների ցանկում:

Դպրոցի տարածքում կա տեղադրված խաչքար, որը նախատեսվում է ապամնտաժել, տեխափոխել անվտանգ վայր և նոր շենքի կառուցումից հետո վերատեղադրել այն դպրոցի տարածքում կամ պատվիրատույի հետ քննարկել այլ տեղամասերում տեղադրելու վերաբերյալ: Տարածքում կան նաև ծառեր, որոնք խոչնդոտ են առաջացնում տեխնիկայի շարժմանը շինարարության և անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է կատարել ծառերի հատում, որպեսզի չխոչնդոտի դպրոցի շենքի քանդման և նորը կառուցմանը :

Ընդհանուր «Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի շենք» տարածք մեքենաների մուտքը կազմակերպված է Վաղարշապատ քաղաքի Բաղրամյան փողոցից: Դպրոցի տարածք հնարավոր է նաև մուտք գործել երկրորդական փողոցից:

Դպրոցի տարածքը պարագծով մասամբ մետաղական ցանցերով ցանկապատված է, մասամբ քարե պարսպով պարփակված:

Դիմային մասում փողոցին կից գոյություն ունեն մեկ հարկանի քարե շինություններ, որոնք ծավալում են հասարակական նշանակության գործունեություններ և տեղադրված են դպրոցի տարածքին կից: Նշված տեղամասերում դպրոցը չունի ցանկապատ:

Որպես ցանկապատ ծառայում է նշված շինությունների արտաքին պատերը:

ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- Դպրոցի շենք - 4210.90 մ² - նախատեսվում է քանդել հիմնովի:
- Պահեստային շենք - 7,7մ² - նախատեսվում է քանդել հիմնովի:
- Կաթսայատուն - 26,4 մ² - նախատեսվում է քանդել հիմնովի:
- Պարիսպ 17,8 մ² - նախատեսվում է քանդել հիմնովի:

ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔ

Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի նոր շենքի նախագիծը մշակվել է պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի հիման վրա:

Նախագծում հաշվի է առնված շենքերի ինտեգրված նախագծման սկզբունքները (IBDA), նաև հիմք են ընդունված ՀՀ նորմատիվ փաստաթղթերը (MCH 2,04,2004), միջպետական շինարարական նորմերի պահանջները և պատվիրատուի առաջադրանքը:

Ուսումնական հաստատության (դպրոցի) շինությունը իրենից ներկայացնում է երեք հարկանի, ամբողջությամբ նկուղային հարկով, բարդ հատակագծային լուծումներով շինություն:

Հատակագծում բարդ լուծումների շնորհիվ շինությունը բաժանված է սեյսմիկ կարաններով երեք մասնաշենքերի:

Շինության ամբողջ մակերեսով նախատեսվում է իրականացնել նկուղ, որը կծառայի որպես ապաստարան և պահուստային սենյակներ: Շինության հարկի հատակագիծը ընդհանուր/ներառյալ արտաքին աստիճաններ, թեքահարթակ և արտաքին պատեր/մակերեսը կազմում է առաջին հարկում- 2619.20մ²:

Որպես +0,000 հարաբերական նիշ ընդունված է առաջին հարկի մաքուր հատակի նիշը:

Կառույցի ցուլուլային հատվածի հարաբերական նիշը ընդունված է հավասար նախատեսվող ճանապարհին և ընդունված է -0,600 հարաբերական նիշին:

Կառույցի արտաքին պարագծով իրականացվող սավաճքի վերին շերտի նիշը ընդունված է -0,500 հարաբերական նիշի:

Նախագծվող շինությունում տեղակայված են դասասենյակներ, լաբորատոր դասասենյակներ, գրադարան, վարչական բջիջ, բժշկական բջիջ, ճաշարանային մաս, խոհանոցային մաս, սպորտային դահլիճ և ընդհանուր օգտագործման տարածքներ:

Նկուղային հարկում տեղակայված են սանհանգույցներ և տեխնիկական սենյակներ: Դեպի նկուղ տանող աստիճանավանդակը նախատեսված է արտաքին առանձին մուտքով և ներքին աստիճանավանդակներով:

Խոհանոցային, ճաշարանային, բժշկական և սպորտային դահլիճից նախատեսված է առանձին տարհանման ելքեր:

Շինության հիմնական մուտքում նախատեսված են թեքահարթակներ համաձային ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի: Դպրոցի շենքում նախատեսված է վերելակ, որը կապում է բոլոր հարկերը, բացառությամբ տանիքը:

Շենքի բոլոր հարկերում նախատեսվում է իրականացնել սանհանգույց հաշմանդամություն ունեցող երեխաների կամ ծնողների համար: Շինության տանիքը հարթ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացման համակարգով:

Տանիքում նախատեսվում է տեղակայել ֆուտբոլի դաշտը, քանի որ նախատեսված տարածքում չկա համապատասխան տարածք ֆուտբոլի դաշտի համար:

Կառույցի ընդհանուր առանձնաքային չափերն են 63.50x48.00մ: Այն նախատեսվում է ե/բ միաձույլ հիմնակմախքով և միաձույլ ե/բ ծածկերով:

Համաձայն առաջադրանքի, դպրոցի շենքի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման համար նախատեսվում է մեկ տեսակի ջերմամեկուսիչ՝ բազալտե մանրաթելերով, կոշտ սալերով, խտությունը 85-125կգ/մ³:

ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Դպրոցի շենքում հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար նախատեսված է մնացած խմբերին համահավասար կենսագործունեության միջավայրի հարմարությունը և հարմարավետությունը: Դպրոցի նկուղային հարկից մինչև երրորդ հարկը սակավաշարժուն և հաշմանդամություն ունեցող խմբերի մատչելի շարժման հոսքը կազմակերպված է վերելակի միջոցով: Գլխավոր մուտքի աստիճանների հետ կազմակերպված է թեքահարթակ, ըստ գործող նորմերին համապատասխան:

Բոլոր հարկերում նախատեսված են սանհանգույցներ հաշմանդամություն ունեցող խմբերի համար և կահավորված են համապատասխան կահավորումով:

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԴԱՇՏ

Դպրոցի շենքին հատկացված հողատարածքում, տարածքի սղության պատճառով, բաց ֆուտբոլի դաշտը նախատեսվում է տեղադրել դպրոցի մասնաշենքերից մեկի տանիքում: Ելք դեպի տանիք ապահովում է աստիճանավանդակներով: Ֆուտբոլի դաշտի ծածկույթը ընտրված է արհեստական խոտածածկույթով: Դաշտը նախատեսվում է տեղադրել սպորտային փակ դահլիճի տանիքին: Դաշտի ամբողջ պարագծով նախատեսվում է իրականացնել մետաղական ցանկապատ՝ 4,5 մ բարձրությամբ:

ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ

Դպրոցի շենքին հատկացված հողատարածքում տարածքի սղության պատճառով կաթսայատան շինությունը նախատեսվում է տեղադրել դպրոցի մասնաշենքերից մեկի տանիքում: Ելք դեպի տանիք ապահովում է աստիճանավանդակներով:

ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվ. թիվ 1 հիմնական դպրոցի նոր կառուցվող շենքի տարածքի կանաչապատման համար նախատեսվում է հատել, տեղափոխել, նոր տնկել որոշ ծառեր և տեղադրել սիզամարգեր:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ գոյություն ունեցող ծառերը խոչնդոտ են հանդիսանում տեխնիկայի տեղաշարժման համար, իսկ դրանցից որոշները գտնվում են նոր կառուցվող շենքի տարածքում: Գոյություն ունեցող ծառերից 68-ը ենթակա են հատման, որոնցից մի մասը անկենսունակ են, իսկ մի մասն էլ անհնար է տեղափոխել, մեծ չափեր ունենալու պատճառով, իսկ 17-ը ենթակա են վերատնկման:

Նախատեսվում է հատվող ծառերի փոխարեն և կանաչ գոտիներում տնկել նոր ծառեր՝ հացենիներ, և արևելյան տուաներ:

Նշված ծառերը տնկելուց պետք է միմյանց միջև պահպանել 3.0մ-ից 4.5մ հեռավորություն:

ԿԱՆԱՀԱՊԱՏ ԳՈՏԻՆԵՐ

Դիտարկվող հողատարածքում նախատեսվող կանաչապատման համար նախատեսվում է տարածքի հարթեցումից հետո բերել շին հրապարակ սև բուսահող և փռել 250մմ հաստությամբ, ընդհանուր 160մ³: Այնուհետ ցանել սիզամարգի սերմերը: Կանաչապատ գոտում նախատեսվում է տնկել ծառեր և թփեր՝ կախված տեղանքի կլիմայական պայմաններից: Ծառերը և թփերը ընդունված են հացենիներ և արևելյան տուաներ: Տարածքում բուսահողե բացակայում է:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի բերման աղբյուրները նախապես կհամաձայնեցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Պահպանման միջոցառումներ չի նախատեսվում, քանի որ բուսահողի ձեռքբերումը կիրականացվի շինարարական աշխատանքներից հետո և ամինջապես կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

ԱՆՑՈՒՂԻՆԵՐ

Անցուղիները նախատեսվում են երեսապատել բազալտե փշրաքարերով, որոնց անցքերը անհրաժեշտ է մշակել ցեմենտային լուծույթով: Փշրաքարերի երեսապատումից առաջ անհրաժեշտ է իրականացնել 100 մմ հաստությամբ սալ՝ ամրանավորված եռակցված ամրանային ցանցով: Անցուղիների նիշը ընդունված է -0.600:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Դպրոցի հողատարածք նախատեսվում է մուտք գործել երկու մուտքով:

Դպրոցի ամբողջ պարագծով իրականացվում է ա/բետոնե ճանապարհ՝ հակահրդեհային նորմերին համապատասխան:

Ճանապարհի նիշը ընդունված է -0,600: Ճանապարհի պարագծով նախատեսվում է իրականացնել բազալտե եզրաքար 100x200մմ չափերի:

ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Նախատեսվում է դպրոցի տարածքում տեղադրել նստարաններ և աղբամաններ: Նստարանների և աղբամանների հիմնականախքները նախատեսվում են իրականացնել մետաղական ,այնուհետ երեսապատել փայտե տախտակներով:

Փայտե տախտակները ամրանում են մետաղական էլեմենտներին ինքնապտուտակների միջոցով: Փայտե էլեմենտները տեղադրելուց հետո անհրաժեշտ է իրականացնել հականեխիչ և հակահրդեհային պաշտպանական միջոցառումներ: Մետաղական էլեմենտները անհրաժեշտ է ներկել հակակոռոզիոն ներկերով (երկու շերտ):

ԵԶՐԱՔԱՐԵՐ

Բարեկարգման բոլոր գոտիները նախատեսված են տարանջատել միմյանցից բազալտե 100x200մմ եզրաքարերով: Եզրաքարերի տեղադրման համար օգտագործել բետոնե հիմքեր B15 դասի բետոնից:

ՑԱՆԿԱՊԱՏ

Նախատեսվում է հողատարածքի ամբողջ պարագծով իրականացնել ցանկապատ՝ 1800 մմ բարձրությամբ:

Ցանկապատը ունի ցոկոլային մաս, որը երեսապատվում է բազալտե սալիկներով:

Ցոկոլային մասին տեղադրվում է մետաղական ճաղավանդակները՝ 1200 մմ բարձրությամբ: Մետաղական էլեմենտները ամրանում են ցոկոլային մասին ներդիր էլեմենտների միջոցով:

Ճաղավանդակները տեղադրելուց հետո անհրաժեշտ է ներկել հակակոռոզիոն ներկով երկու շերտ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ


- Հողատարածքի մակերես՝ 5575.0քմ
- Կառուապատման մակերես՝ 2620քմ
- Բարեկարգման մակերես՝ 2313քմ
- Կանաչապատման մակերես՝ 642քմ
- Շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսը՝ 12200քմ
- Աշակերտների քանակ՝ 675

Նոր կառուցվող դպրոցի էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը կիրականացվեն համաձայն գործող պայմանագրերի համապատասխան լիազոր մարմինների հետ /կցված Հավելվածներ բաժնում/:

1.5.2 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ



1.5.3 *Բրավիճակային հատակագիծ*







UNIT SCHEDULE

Unit No.	Coordinates		Unit No.	Sq. Ft.
	X	Y		
1	843977.488	444244.524	1-2	909
2	843977.789	444253.319	2-3	939
3	843977.889	444253.315	3-4	909
4	843983.886	444253.314	4-5	959
5	843984.204	444262.009	5-6	205
6	843984.271	444264.658	6-7	280
7	843984.300	444267.237	7-8	285
8	843984.455	444270.105	8-9	3004
9	843980.307	444266.000	9-10	380
10	843983.217	444263.636	10-11	3370
11	843984.775	444271.966	11-12	2180
12	843983.087	444271.023	12-13	789
13	843980.545	444262.762	13-14	759
14	843984.803	444275.295	14-15	741
15	843984.071	444283.920	15-16	522
16	843984.278	444284.533	16-17	523
17	843981.075	444281.221	17-18	425
18	843983.544	444277.800	18-19	271
19	843986.952	444275.619	19-20	319
20	843987.022	444275.975	20-21	329
21	843986.955	444275.295	21-22	385
22	843986.002	444275.218	22-23	1820
23	843982.048	444281.539	23-24	739
24	843982.342	444284.635	24-25	1180
25	843981.579	444283.960	25-26	980
26	843981.891	444299.202	26-27	1260
27	843986.291	444299.182	27-28	980
28	843986.290	444299.982	28-29	440
29	843985.640	444299.974	29-30	970
30	843983.638	444200.074	30-31	710
31	843986.538	444200.665	31-32	170
32	843986.741	444218.960	32-33	131
33	843983.426	444218.961	33-34	338
34	843983.440	444219.540	34-35	350
35	843981.748	444219.420	35-36	209
36	843981.700	444221.512	36-37	1456
37	843982.511	444221.058	37-38	778
38	843982.772	444228.838	38-39	580
39	843982.899	444232.600	39-40	480
40	843980.280	444237.433	40-41	670
41	843983.285	444244.129	41-42	505
42	843977.538	444244.519	42-1	375

1.5.4 Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ




ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾՈՒՄ ԵՎ ԵԿՍՊՈԶԻՑԻԱ
 ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԱՌԻՄԱՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	ԷՍՎԿԿԱՏՈՐԻ ԿԱԶՄՈՒՆԵՐԸ
	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՎԱՐՄԱՆՆԵՐԸ
	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՄԱՆՆԵՐԸ, ՑԱՆԿԱՊԱՏԸ
	ԻՆՔՆԱՅՈՒՄԻ ԸՆԴՈՍՄԱՆ ՈՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	ՍՈՒՏԵՐ և ԵԼԵԻ ՈՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	ԷՍՎԿԿԱՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՍՄԱՆ ՈՐՂՈՒԹՅՈՒՆԸ
	ԷՍՎԿԿԱՏՈՐԻ ԴՈՐԱՊԻ ԸՆԴՈՍՄԱՆ ՈՐՂՈՒԹՅՈՒՆԸ
	ԷՍՎԿԿԱՏՈՐ
	ԻՆՔՆԱՅՈՒՄ
	ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԸՆԴՈՍՄԱՆ ՏԱԿԿԵՐ
	ԲԻՈՉՈՒԳԱՐԱՆՆԵՐ
	ԵՐԵՄԱԿԱՆԻ (ռազմեր) ԱՆՅՈՒՄ
	ԲԱՑ ԴԱՅԵՍԻ ՏԱՐԱԾԵ
	ՓՈԿ ԴԱՅԵՍ
	ՔԱԿԱՐԴԵՐԱՅԻՆ ԳՈՂՈՑ

		ՀՀԳՍՏԱԳՀՇՁԲ-23/66	
		Պատրաստող: Մարտիկ Գևորգյան, Գևորգյան Գևորգ Գևորգի անունով ընդհանուր ճարտարապետական գործարան	
Ստորագրող:	Գ. Գևորգյան	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՊՈՐՏԱԿԱՐԳ	Պաշտոն
Ստորագրող:	Մ. Գևորգյան	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՊՈՐՏԱԿԱՐԳ	Պաշտոն
Ստորագրող:	Մ. Գևորգյան	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՊՈՐՏԱԿԱՐԳ	Պաշտոն
		ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՊՈՐՏԱԿԱՐԳ	ՍՏՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐԱՆԻ ՊՈՐՏԱԿԱՐԳ



				ՀՀԳՍՏԱԳՆՇՈՁԲ-23/66		
Պատճառագրով մշակված փայտե քարե կառուցվածքի համարի քարե զանգեղի կառուցման համար նախատեսված շինարարական գործունեության իրականացման համար հանձնարված շինարարական ծրագրի մասնագրություն						
Մշակող	Մշակված	Ստորագրող	Ստորագրված	Մաս	Թիվ	Թվական
Ստորագրող	Մշակված	Ստորագրված	Ստորագրված	Ս	4	8
Ստորագրող	Մշակված	Ստորագրված	Ստորագրված	ՍՏ ԴԻՍ ԱՅՆ ԱԴՅ		

1.5.5 Շահանակացույց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1
ՀԻՄՆԱԿԱՆ ՂՊՐՈՅԻ ՊՈԱԿ-Ի ՆՈՐ ԵՇԵԼԻ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊՐԱՑԻԿ

ID	Task Mode	Task Name	Duration	Half 2, 2024					Half 1, 2025					Half 2, 2025					Half 1, 2026					Half 2, 2026					Half 1, 2027					Half 2, 2027							
				J	A	S	O	N	D	J	F	M	A	M	J	J	A	S	O	N	D	J	F	M	A	M	J	J	A	S	O	N	D	J	F	M	A	M	J	J	A
0		Շինարարության տևողությունը	759 days	Oct 1 '24 → Aug 30 '27																																					
1		Նախապատրաստական աշխատանքներ	30 days	Oct 1 '24 → Nov 12 '24																																					
3		Քանդման աշխատանքներ	91 days	Nov 12 '24 → Mar 19 '25																																					
6		Հողային աշխատանքներ	129.88 days	Mar 19 '25 → Sep 16 '25																																					
10		Հիմքեր, հիմնային հեծաններ, Նկուղային հարկ	120 days	Apr 14 '25 → Sep 29 '25																																					
13		Մասնաշենքերի ե/բետոնյա կարկասի պատրաստում	350 days	Sep 29 '25 → Feb 1 '27																																					
15		Տանիքային աշխատանքներ	60 days	Dec 7 '26 → Mar 1 '27																																					
17		Արտաքին հարդարման աշխատանքներ	120 days	Aug 31 '26 → Feb 15 '27																																					
19		Միջնորմներ	120 days	Oct 12 '26 → Mar 29 '27																																					
21		Բացվածքներ	45 days	Feb 15 '27 → Apr 19 '27																																					
23		Էլտեխնիկական աշխատանքներ	210 days	Nov 9 '26 → Aug 30 '27																																					
26		Սանտեխնիկական աշխատանքներ	210 days	Nov 9 '26 → Aug 30 '27																																					
29		Ներքին հարդարման աշխատանքներ	170 days	Jan 4 '27 → Aug 30 '27																																					
33		Հատակներ	120 days	Mar 15 '27 → Aug 30 '27																																					
35		Բարեկարգման աշխատանքներ	150 days	Feb 1 '27 → Aug 30 '27																																					

ՀՆԳԱՄԱԳՉՈՂԲ-23/66										
Վերջնական մարտահրավերի արձեղծումի համարյալ օրվա ընթացքի մասին տեղեկությունները										
Ստորագրող	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական
Ստորագրող	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական
Ստորագրող	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական	Վերջնական
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊՐԱՑԻԿ										
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊՐԱՑԻԿ										

1.5.6 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ*

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը (Նախագծային փուլ) իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը և Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանները /կցված Հավելվածներ բաժնում/: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

1. ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:
2. ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում:
- Հրդեհամարման համակարգ:
- Կենցաղային կոյուղի:

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի ջրամատակարարման և կոյուղու նախագիծն իրականացված է պատվիրատուի պատվերին և գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծում նախատեսված է ներքին ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ de 20-63 տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով:

Ջրագծի ելակետային աղբյուր է հանդիսանում գոյություն ունեցող արտաքին ջրագիծը:

Միացումն իրականացվում է նախագծային պոլիէթիլենային խողովակի^ա պոլիէթիլենային եռաբաշխիչ հանգույցի միջոցով: Միացման տեղում տեղադրվում է ե/բ դիտահոր, սողնակային փական, ջրաչափական հանգույց: Մուտքագծերի կանգնակների վրա նախատեսված է տեղադրել փականներ:

Սանհանգույցների և դասասենյակների ներքին ջրամատակարարումն իրականացվում է պոլիպրոպիլենային de 20-25 խողովակներով, իսկ կանգնակները նախատեսված են de 25 - de 32 խողովակներով: Ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա, ստորգետնյա եղանակով կամ ներքնի հարկի առաստաղի տակով, կամ որ նույն է կախովի առաստաղների միջով, իսկ արտաքին խողովակները իրակացվում է ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային HDPE խողովակներով: Արտաքին ջրագծը նախատեսված է իրականացնել 1.1մ խորությամբ խրամուղիների միջով՝ ավազի նախաշերտի վրայով, ծածկելով ավազի պաշտպանիչ շերտով:

Տաք ջրամատակարարումն իրականացվում է կառուցվող կաթսայատանը տեղադրվող ջրատաքացուցիչների միջոցով:

Սանիտարական սարքավորումներից կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը հեռանում են նախատեսված կանգնակների միջոցով, որոնք էլ միանալով իրար լցվում են արտաքին

մասում տեղադրվող հավաքովի ե/բ դիտահորեր՝ որտեղից կոյուղահոսքը կուղորդվի դեպի կենտրոնական կոլեկտոր, ստորգետնյա ծալքավոր խողովակների միջոցով:

Կոյուղագծի ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա եղանակով կամ ներքնի հարկի առաստաղի տակով պոլիվինիլքլորիդե de 50 - 110 խողովակներով, իսկ արտաքին կոյուղագծերը մոնտաժվում են ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային ծալքավոր de 150-200 խողովակներով: Արտաքին կոյուղագծերը միացվում են կոյուղու գոյություն ունեցող դիտահորին: Արտաքին ջրագծը նախատեսված է իրականացնել 0.7 -1.5մ խորությամբ խրամուղիների միջով՝ կախված խողովակների և տեղանքի անհրաժեշտ թեքություններից, ավազի նախաշերտի վրայով, ծածկելով ավազի պաշտպանիչ շերտով:

Կոյուղու խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերում, որոնցում անցնում են խողովակները տեղադրել պողպատե պաշտպանիչ պատյաններ և լցնել չայրվող էլաստիկ նյութով:

Ներքին հակահրդեհային ջրամատակարարումն իրականացվում պողպատե Ф50 խողովակներով: Ելակետային աղբյուր է հանդիսանում դպրոցը սնող նախագծային ջրատարը: Նախատեսված է տեղադրել անհրաժեշտ քանակությամբ հակահրդեհային պահարաններ , որտեղ տեղադրվում են հակահրդեհային խողովակները փողրակներով և յուրաքանչյուր պահարանում 2 ական կրակմարիչներ:

Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3.05.01-85:

Հողային բոլոր աշխատանքներն իրականացնել այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները:

1.5.7 Ձեռուցում , հովացում և օդափոխություն

Նախագծվող դպրոցի ջեռուցման, հովացման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն՝

- պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի
- ճարտարապետա-շինարարական գծագրերի
- գործող շինարարական նորմերի՝

1. ՀՀՇՆ IV-12.02.01.-04 <<Ձեռուցման, օդափոխության և օդի լավորակում>>

2. ՇՆ և Կ II-7.102-98 <<Շինարարական ջերմաֆիզիկա սենքերի պատող

կոնստրուկցիաների>>

3. ՀՀՇՆ II -7,01-2011 <<Շինարարական կլիմայաբանություն:

ՁԵՌՈՒՑՈՒՄ / ՀՈՎԱՑՈՒՄ

Շենքում նախատեսված են արհեստական շրջանառությամբ, երկխողովականի, ջեռուցման և հովացման համակարգ:

Ջերմամատակարարումը և սառնամատակարարումը իրականացվում է տանիքում տեղակայված կաթսայատնից և չիլլերներից: Ջերմատարի ջերմաստիճաններն են 800C/600C:

Ձեռուցման համակարգը հաշվարկված է ըստ սենյակների նշանակության և ջերմային կորուստների:

Ցրտատարի ջերմաստիճանները են 70C/120C:

Դասարաններում նախատեսված է միայն ջեռուցման համակարգ, որտեղ ջեռուցման սարքերը նախատեսված են հիգիենիկ մարտկոցներ:

Դահլիճում, ճաշարանում, սպորտ-դահլիճում և միջանցքներում նախատեսված են ջեռուցման և հովացման համակարգեր՝ ջեռուցման-հովացման սարքերը ֆանքայլներն են:

Ջերմատարի և ցրտատարի բաշխումն իրականացվում է կաթսայատնից կանգնակներով: Խողովակներն ջերմամեկուսացված են խողովակաձև ռետինե ջերմամեկուսիչով 9մմ հաստությամբ:

Համակարգից ջրի դատարկումը իրականացվում է ստորին կետերից՝ դեպի տեխնիկական տարածքների հոսակներ: Համակարգի բարձր կետերում տեղադրվում են ավտոմատ օդահեռացուցիչներ:

ՕՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Դասարանների հատվածում նախատեսված է կենտրոնացված կանգնակային արտածման բնական օդափոխության համակարգ :

Օդափոխության կանգնակներն նախատեսված են հորանային տիպի, յուր. հարկի օդափոխության հորանին միացվում է ճաղաշար: Իսկ ներածումը կատարվում է միջանցքներում, դռների վրա նախատեսված ճաղաշարերով:

Դահլիճում, ճաշարանում, սպորտ-դահլիճում և խոհանոցում նախատեսված են օդի մեխանիկական դրոմամբ ներածման և արտածման համակարգեր:

Ծածկերի, ներքին պատերի և միջնորմերի հետ խողովակաշարերի հատման տեղերում խողովակները տեղադրվում են մետաղական պարկուճների մեջ: Միացման մասերում անցքերի և արանքների վերափակման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել հրակայուն նյութերի կիրառում՝ ըստ սահմանված նորմերի:

ՋԵՐՄԱՍԵՆԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Կաթսայատան նախագիծը կազմվել է համաձայն՝

ա) ջերմային ծախսերի (համաձայն պատվիրատուի առաջադրանքի)

բ) ճարտարապետաշինարարական գծագրերի

գ) ՇՆ և Կ II-35-76-ի N1 փոփոխություններով "Կաթսայատան տեղակայումներ":

Նախագծվող կաթսայատունը սպասարկում է շենքի ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգերը: Ջերմատարը - ջուր T1=800C, T2=600C ջերմաստիճաններով: Վառելիքը - ցածր ճնշման բնական գազ: Ելնելով ջերմային ծախսերից նախագծում նախատեսված են 1.2ՄՎտ:

Կաթսաները համալրված են ավտոմատացված գազայրիչներով, որոնք աշխատում են ցածր ճնշման բնական գազով: Կաթսաները Եվրոպական արտադրության են: Կաթսայատանը տեղակայվում են կաթսաները, հիդրավլիկ բաժանարարը, կաթսաների շրջանառության պոմպերը, համակարգի շրջանառության պոմպերը, ջերմափոխանակիչը, թաղանթային ընդարձակիչ անոթները, կեղտազտիչը: Կաթսաները համալրված են

պումպերով, որոնք աշխատանքի հրաման են ստանում կաթսայի ղեկավարման վահանակից: Նշված պումպերը ապահովում են համակարգի ջերմակրի շրջանառությունը կաթսաներից մինչև հիդրավլիկ բաժանարար:

Չիլերները 2-ն են, տեղադրված են տանիքին, Եվրոպական արտադրության են Aermec: Ցրտամատակարարման համակարգի պումպերը նույնպես տեղադրված են կաթսայատանը:

Համակարգերից յուրաքանչյուրի համար հիմնական պումպերը երկուսն են, որոնցից մեկը համարվում է պահուստային:

Համակարգի աշխատանքային ճնշումը ընդունված է 2,5 մթն, փորձարկումը պետք է կատարել 1,5 անգամ ավել ճնշման պայմաններում: Կաթսայատան սրահում նախատեսված է եռապատիկ ներածման և արտածման օդափոխություն:

Ծխատարներում կոնդենսացիայի գոյացումից ինչպես նաև լրացուցիչ աերոդինամիկական դիմադրությունից խուսափելու համար ծխատարները բարձրանում են կաթսայատան ներսից, ջերմամեկուսացնելով տանիքից բարձր հատվածը 5սմ հանքաբամբակով և վրայից պատելով չժանգոտվող թիթեղից պաշտպանիչ շերտով: Խողովակաշարերը մոնտաժվում են 0.002 մմ/մ թեքությամբ: Խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից՝ ջրի դատարկում: Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով կաթսայատան բոլոր մատակարարող, հետադարձ խողովակաշարերը ջերմամեկուսացվում են 30մմ հանքաբամբակով, այնուհետև պատվում են պոլիէթիլենային պաշտպանիչ շերտով:

Մինչև մեկուսացնելը մակերեսները մաքրվում են և ներկվում են հակաքայքայիչ լաքով, ինչպես նաև կատարվում է ամբողջ համակարգի լվացում 2 անգամ: Սարքավորումներից և խողովակաշարերից ջրահեռացումը կազմակերպվում է կենտրոնացված, ցածր կետերում տեղադրված դատարկիչ փականների և հատակին տեղադրված ջրահեռացման հոսակների օգնությամբ:

Կաթսայատանը նախատեսված են համապատասխան ջրահավաքիչներ, որոնք միանում են հոսակին: Ապահովել կաթսայատան հատակի թեքությունը դեպի հոսակ:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈՒՆՈՒՄԻ ԱՄԵՄԱՆ

Որպես շինարարական դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված **ընդհանրացված** տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ **հատուկ արտահագուստ, կոշիկ**), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով **ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն**), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Շինարարության պայմանները

ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի ՊՈԱԿ-ի նոր շենքի շինարարության կազմակերպման նախագիծը իրականացվել է ճարտարապետական և կոնստրուկտորական նախագծերի հիման վրա համաձայն СНиП 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում) և СН440-79 (Շինարարության տևողություն նորմաներ) ձեռնարկների պահանջով:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,

- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

2.2 Հիմնական աշխատանքների իրականացման մեթոդները

Շին հրապարակը ունի երկու մուտք՝ մեկը Բաղրամյան փողոցի կողմից, մյուսը հյուսային կողմում գտնվող կիսակառույց շինությունից 20 մետր դեպի արևելք: Ճանապարհների առկայությունը հնարավորություն է տալիս քանդման աշխատանքները կատարել երկու ճակատով: Քանդման աշխատանքների ճակատի ուղղությունը և հերթականությունը ցույց է տրված համապատասխան գծագրում:

Հողային աշխատանքների ճակատի, տեխնիկաների աշխատանքային և պարապ շարժման ուղղությունները, ինչպես նաև կանգառները ցույց են տրված համապատասխան գծագրերում:

Յուրաքանչյուր տեղամասում աշխատանքները կատարել հոսքային եղանակով:

Հողային և հիմնային աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային նախագծերի և ՇՆևԿ 3.02.01-87 (Հողային շինվածքներ և հիմքեր) ձեռնարկի պահանջներով:

Հողային աշխատանքները իրականացնել հակառակ բահ էքսկավատորով:

Ավելնորդ բնահողը շին հրապարակից տեղափոխել ինքնաթափերի միջոցով թափոնների համար նախատեսված տարածք, իսկ հետլիցքի համար նախատեսված բնահողը պահեստավորել շինհրապարակի տարածքում:

Հիմքերի տակ գրունտը 10-15սմ մշակել ձեռքով:

Կրող և պատող կոնստրուկցիաների շինմնտաժային աշխատանքները կատարել պահպանելով ՇՆևԿ 3.03.01-87-ի և ՇՆևԿ III 4-80-ի և ծրագրերի պահանջների համապատասխան:

Շինմնտաժային աշխատանքների կատարման համար առաջարկվում է ամբարձիչ կռան QTZ-160 (T6024):

Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների ամրանային կարկասների պատրաստումը առաջարկվում է պատվիրել մասնագիտացված արտադրամասերում:

Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան դասի ապրանքային բետոնը պատվիրել բետոնային հանգույցում :

Բետոնը օբյեկտ բերել ինքնագնաց բետոնախառնիչ մեքենայով:

Կռունկով բետոնը կաղապարված կոնստրուկցիային մատուցել 0.8մ^3 ոչ մեծ տարողությամբ շարժական բունկերով կամ բետոնամղիչ ինքնագնացով:

Կախված կոնստրուկցիայի տեսակից բետոնի խտացումը կատարել խորքային կամ մակերևույթային թրթռիչի օգնությամբ:

Ապահովել բետոնի խնամքը թե ամառային և թե ձմեռային պայմաններում ըստ նորմատիվներին համապատասխան:

Տանիքի, հատակների և հարդարման աշխատանքները կատարել ՇՆևԿ 3.04.01-87 , ՇՆևԿ III-4-80 -ի և աշխատանքային նախագծերի պահանջներով:

Հատակների և հարդարման աշխատանքները իրականացնել տանիքածածկային և բացվածքների /դուռ, լուսամուտ/ փակման աշխատանքներից հետո:

Ձմռանը ներքին հարդարման աշխատանքները կատարել ներսում $+8\text{ }^{\circ}\text{C}$ ոչ պակաս ջերմության պայմաններում:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 759 օրացուցային օր, բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

	Անվանումը	Չափման միավորը	քանակը
1	ավտոկռան 25տ	հատ	2
1	Հակառակ բահ էքսկավատոր շերեփ. ծավ. 1.2մ3	հատ	1
3	Ինքնաթափ մեքենա	հատ	3
4	Բուլդոզեր		1
5	Խորքային թրթռիչ էլեկտրական	հատ	4
6	Եռակցման ապարատ	հատ	4
7	Էլեկտրոդի բռնիչ	հատ	4
8	Ձեռքի գործիքների կոմպլեկտ	հատ	4
9	Անկյունային հղկիչ մեծ	հատ	4
10	Անկյունային հղկիչ փոքր	հատ	4
11	Պտուտակահան	հատ	2
12	Ձեռքի գայլիկոն , շաղափիչ	հատ	2
13	Ձեռքի սկավառակային էլ. սղոց	հատ	2
14	Բեռնատար մեքենա 1.5տ	հատ	1
15	Քլունգ	հատ	5
16	Լոմ	հատ	5
17	Սղոց ձեռքի	հատ	5
18	Բահ	հատ	10
19	Սուրճ	հատ	4
20	Ուրագ	հատ	4
21	Շինարարական սայլակ	հատ	10
22	Ձեռնոց	գույգ	100
23	Սաղավարտ	հատ	30
24	Վայիկ տարբեր չափսերի	հատ	50
25	Կացին	հատ	2
26	Ինվենտարային կաղապարներ		

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է ET 14 էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 13365 մ³

Հետլիցք՝ 3200 մ³

Ավելացած 10165մ³ հողային զանգվածը կտեղափոխվի Վաղարշապատ համայնքի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

2.5.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

a) Ծինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 44 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 759 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 44 \times 0.025) \times 759 = 871,36 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.148 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 5575 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 5575 \times 0.0015 \times 300 = 2508,75 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 8.36 \text{ մ}^3/\text{օր}$$

c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

S₂ – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 մ²,

K₂ – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

T – ժամանակահատվածը օրերով, 450

$$U_2 = 10 \times 0.14 \times 759 = 1062.6 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.4 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4442.71 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեզում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադր:

2.5.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГООТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով ` համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է զրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը` լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ__ ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան (վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ` 200 մ2 մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ռոտզման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատնկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ուտիներ խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կղիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցվելով դենդրոլոգի հետ առաջարկվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին համապատասխան քանակներով՝

ԲԱՐՔԱՐԻՍ - 7 հատ
ՀԱՅԵՆԻ – 10 հատ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏՈՒՅԱ – 15 հատ
ԱՍՊԻՐԱԿ - 12 հատ
ՖՈՐՁԻՑԻԱ - 8 հատ
ԽԵՆՈՄԵԼԵՍ - 7 հատ
ԼԱԲՈՌՆՈՒՄ ԱՆԱԳԻՐԱՏԵՐԵՎ - 4 հատ
ԵՂԵՎՆԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ - 10 հատ
ԳԻՀԻ ԿԱԶԱԿԱԿԱՆ - 5 հատ
ՀՈՒԴԱՅԱԾԱՌ - 6 հատ
ՁԻԱԿԱՍԿ - 10 հատ
ՍԱՍՇԻՏ - 546 զմ
ՄԻԶԱՄԱՐԳ - 564 մ²

3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 642 \text{ մ}^2$,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 642) \times 2 \times 175 = \underline{1348.2} \text{ մ}^3/\text{տարի}$$

3.2 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց

կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վաղարշապատ քաղաքը գտնվում է Արմավիրի մարզում: Այն գտնվում է Երևան քաղաքից 20կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Արմավիրից քաղաքից՝ 24կմ հեռավորության վրա, իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան գոգավորության սահմաններում, Քասաղ գետի ավազանում:

Հիդրոերկրաբանական պայմանները

Գրունտային ջրերը բացված են 7,5-9,0 մետր խորություններում: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները որոնք կարող են ազդել կառուցվող դպրոցի նորմալ կենսագործնեության վրա բացակայում են:

Տեղանքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և լաբորատոր տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերնից-ներքև)։

Շերտ – 1

Թափվածքային գրունտ, շերտը համատարած չէ: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Շերտ – 2

Ավազակավեր շականակագույն, խոնավ, ձիգ պլաստիկ կոնսիստենցիայով: Շերտն չունի համատարած տարածում, բացված հզորությունը հասնում մինչև է 1,6 մետր: Ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:

Շերտ – 3

Կոպճաճալաքարային, ավազակոպճային գրունտներ, ավազային լցոնով, խոնավ, միջին խտացվածության կազմվածք: Շերտի հզորությունը տատանվում է 0,6ից 8,0 մետր: Շերտը համատարած է:

Շերտ – 4

Ավազային գրունտ, ջրահագեցված, միջին խտացվածության կազմվածք:

Շերտն չունի համատարած տարածում, բացված հզորությունը հասնում մինչև է 1,0 մետր:

4.1 Կլիմայական պայմանները

Արմավիրի մարզը ծովի մակարդակից տատանվում է 800-1000մ բարձրությունների վրա, իսկ Արմավիր քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա:

Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս), հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40-42°C: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ (հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10-20°C ցուրտ): Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Բնորոշ են միջին արագության ` առավելագույնը` 3,5 մ/վրկ արագության արևմտյան և հարավ-արևմտյան քամիները: Չյան ծածկույթի առավելագույն հաստությունը կազմում է 42 սմ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Համաձայն նշված փաստաթղթի Արմավիր քաղաքում կլիմայական բնութագրերն են.

Աղյուսակ 1.

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		Օդի ջերմաստիճանը, °C														
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20.0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների													ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX		I	II				
Արմավիր	18/19	19/21	25/26	32/37	44/42	26/21	12/38	9/31	11/35	25/30	23/30	16/20	260/42	42	38	92

Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ					ըստ ուղղությունների								
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7. Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	ՀսԱրմ	2.8
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8						
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1.3				
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1.1				
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6						
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	72	0.6				
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8						

4.2 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և

գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Վաղարշապատ համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50000 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.095 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ³:

4.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր և քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարածն ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այդր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է:

Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք):

Շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

4.4 Հողածածկ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փոխար փերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ավակալահողերը: Տեղ-տեղ երևում են թափիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փոխար նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է երկար տարիներ գործող կառուցապատված և ասֆալտապատված տարածքում, որով էլ պայմանավորված է հողաբուսաշերտի բացակայությունը:

4.5 Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

4.5.1 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես

դովինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղաձաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrysa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օջան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հացհամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝ այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritium araraicum), կարմրանազգիներից՝ կարմրան (Tamarix), կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (Tetradiclis tanella) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված է 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսասանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ խնկեղեգ ճահճային (Acorus calamus L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային (Sternbergia colchiciflora Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշորաբաժակ (Actinolema macrolema Boiss), Երնջակ Վանատուրի (Eryngium wanaturii Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (Amberboa iljiniana Grossh) և այլն:

4.5.2 Կենդանական աշխարհ

Կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խիտունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դովինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվես ս), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L. (կաքավ), Grus grus L. (կոռունկ) և այլն:

Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բաղը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճոխկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphirophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseptoria* Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (*Rhinolophuseuryales*), վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linneaus), փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Linneaus), Ուբադշի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա (*Scotodrymadusa satunini*), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ (*Aegipus monachus*) և այլն:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումների՝ տարածքում հանդիպում են.

- Երկարատու սցինկ (*Eumeces schneideri*)-որպես «խոցելի» գնահատվող կենդանատեսակը, որը հայտնի է Արարատյան հարթավայրից, Արփա գետի կիրճից, Արաքս գետի հովտից և հանրապետության հարավային նախալեռնային շրջաններից:

- Մատուտակ խոզանավոր (*Glycyrrhiza echinata* L.)-խոցելի բուսատեսակը, որը հանդիպում է միայն Երևանի (Զելվա, Միս գյուղերի և Էջմիածին քաղաքի շրջակայք) և Մեղրու (Լեհվազ գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում,

- Կալիստու կասպիական (*Kalidium caspicum* (L.) Ungern-Sternb.)-վտանգված բուսատեսակը, որը հանդիպում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արազափ, Մարգարա, Երասխահուն, Էջմիածին, Երասխ):

4.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա:

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Արմավիրի մարզի բնության հուշարձանների ցանկ

Ջրագրական հուշարձաններ		
1.	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձաններ		
1.	«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
2.	«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

4.7 Պատմամշակութային հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից[1]: Ցանկում ներառված է ընդամենը 202 հուշարձան (30 միավոր):

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, շինարարական աշխատանքների ընթացում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կղադարեցնեն աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնեն լիազորված մարմնին»:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարա նիշ
Բնակելի տուն	19 դ. վերջ	Արույան - Մովսես Խորենացի փ. խաչմերուկ	4.2/1
Բնակելի տուն	20 դ. I կես	Ալավերդյան փ., 8	4.2/2
Բնակելի տուն	1947 թ.	Բաղրամյան փ., 37	4.2/3
Բնակելի տուն	19 դ. I կես	Իսի Լե Մուլինո փ. 46	4.2/4
Բնակելի տուն	1950-ական թթ.	Մեսրոպ Մաշտոց փ., 79	4.2/5
Բնակելի	20 դ. սկիզբ	Շահումյան փ., 10	4.2/6

տուն			
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Շահումյան փ., 12, 14	4.2/7
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Շահումյան փ., 16	4.2/8
Բնակելի տուն	1880-ական թթ.	Շահումյան փ., 18	4.2/9
Բնակելի տուն	20 դ. սկիզբ	Շահումյան փ., 21	4.2/10
Բնակելի տուն	1914 թ.	Շահումյան փ., 51	4.2/11
Գերեզմանոց՝ Էջմիածնի միաբանության	17-20 դդ.	ք. մ.	4.2/12
Գերեզման Առաքել Դավրիժեցու	1670 թ.		4.2/12.1
Գերեզման Մուրադ ճարտարապետի	1656 թ.		4.2/12.2
Եկեղեցական համալիր՝ Վաղարշապատի Սբ. Գրիգոր (Զվարթնոց)	5-7 դդ.	3 կմ ան	4.2/13
Եկեղեցի	5 դ. կես		4.2/13.1
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	643-662 թթ.		4.2/13.2
Բաղնիք	7 դ. կես		4.2/13.3
Պալատ կաթողիկոսական	652-662 թթ.		4.2/13.4
Գահասրահ	652-662 թթ.		4.2/13.4.1
Թանգարանի շենք. Զվարթնոցի թանգարանի շենքը	1937 թ.		4.2/13.5
Հուշարձան՝ Թորոս	1985 թ.		4.2/13.6

Թորամանյան Ի			
Կոթող	վ.թ.ա. 7 դ.		4.2/13.7
Հնձան	7 դ.		4.2/13.8
Սեդանատուն	7 դ.		4.2/13.9
Զրհոր	4-5 դդ.		4.2/13.10
Պարիսպ	7 դ.		4.2/13.11
Եկեղեցական համալիր «Մայր Աթոռ Սբ. Էջմիածին»	303 թ. - 20 դ.	Մովսես Խորենացի - Արարատյան փ. խաչմերուկ	4.2/14
Եկեղեցի «Մայր տաճար»	4-17 դդ.		4.2/14.1
Զանգակատու ն	1653-1658 թթ.		4.2/14.1.1
Գանձարան	1869 թ.		4.2/14.1.2
Խաչքար տեր Ստեփանոսի	1304 թ.		4.2/14.1.2.1
Խաչքար	9 դ.		4.2/14.1.3
Խաչքար	9 դ.		4.2/14.1.4
Խաչքար` Դեղոյնի	1148 թ.		4.2/14.1.5
Խաչքար	1171 թ.		4.2/14.1.6
Խաչքար` Խաչատուր Անհաղթ փիլիսոփայի	1218 թ.		4.2/14.1.7
Խաչքար` Գրիգոր Խաղբակյանի	1233 թ.		4.2/14.1.8
Խաչքար` Գրիգոր և Մամբան Մամիկոնյան ների («Ամենափրկի չ»)	1273 թ.		4.2/14.1.9
Խաչքար	1287 թ.		4.2/14.1.10
Խաչքար` Թամթոյի	1297 թ.		4.2/14.1.11
Խաչքար	13 դ.		4.2/14.1.12

Խաչքար	13 դ.		4.2/14.1.13
Խաչքար	13 դ.		4.2/14.1.14
Խաչքար՝ Ներսեսի և Տիրացի	13 դ.		4.2/14.1.15
Խաչքար	13 դ.		4.2/14.1.16
Խաչքար	14 դ.		4.2/14.1.17
Խաչքար՝ Ասիլի	1451 թ.		4.2/14.1.18
Խաչքար՝ Սառայի	1451 թ.		4.2/14.1.19
Խաչքար՝ Մարջանի և Ալեքսանի	1495 թ.		4.2/14.1.20
Խաչքար՝ Իսաթունի	15 դ.		4.2/14.1.21
Խաչքար՝ Վարդանի և Արևի	1543 թ.		4.2/14.1.22
Խաչքար	1569 թ.		4.2/14.1.23
Խաչքար՝ Սուլթանդուլի	16 դ.		4.2/14.1.24
Խաչքար	16 դ.		4.2/14.1.25
Խաչքար՝ Հակոբի	1601 թ.		4.2/14.1.26
Խաչքար՝ Զարարի, ծնողների և Ամիրի	1602 թ.		4.2/14.1.27
Խաչքար՝ Ստեփանոսի	1602 թ.		4.2/14.1.28
Խաչքար՝ պարոն Հովհաննեսի	1602 թ.		4.2/14.1.29
Խաչքար՝ Խերխորի	1602 թ.		4.2/14.1.30
Խաչքար՝ Սուլթանի, Ավետիքի և Բուրթելի	1603 թ.		4.2/14.1.31
Խաչքար	1639 թ.		4.2/14.1.32
Խաչքար՝ Սարգսի	1745 թ.		4.2/14.1.33

Խաչքար՝ Մեծ եղեռնի 50-ամյակին	1965 թ.		4.2/14.1.34
Խաչքար՝ Տ.Տ. Վազգեն Ա կաթողիկոսի 20-ամյա հայրապետությանը	1976 թ.		4.2/14.1.35
Կոթող	մ.թ.ա. 8-7 դդ.		4.2/14.1.36
Կոթող	1603 թ.		4.2/14.1.37
Հուշաղբյուր՝ Խրիմյան Հայրիկին	1982 թ.		4.2/14.1.38
Հուշաղբյուր «Կաթնաղբյուր»	1967 թ.		4.2/14.1.39
Խաչքար	13 դ.		4.2/14.1.39.1
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Դանիել Ա Պայազատեցու	1808 թ.		4.2/14.1.40
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ը Կարբեցու	1842 թ.		4.2/14.1.41
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու	1857 թ.		4.2/14.1.42
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու	1882 թ.		4.2/14.1.43
Գերեզման	1891 թ.		4.2/14.1.44

Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա-ի			
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ)	1907 թ.		4.2/14.1.45
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մաթևոս Բ Կոստանդնու պոլսեցու	1910 թ.		4.2/14.1.46
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Տփիսիսեցու	1930 թ.		4.2/14.1.47
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի	1954 թ.		4.2/14.1.48
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի	1994 թ.		4.2/14.1.49
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի	1999 թ.		4.2/14.1.50
Բնակելի շենք վանականներ ի («Երեմյան խցեր»)	1894 թ.		4.2/14.2
Հյուրանոց «Ղազարապա տ»	18 դ. I կես		4.2/14.3

Մատենադարանի շենք	1903 թ.		4.2/14.4
Սեդանատուն	17 դ. I կես		4.2/14.5
Վեհարան	1738-1741 թթ.		4.2/14.6
Խաչքար	13 դ.		4.2/14.6.1
Խաչքար՝ Աթաբեկ Տարսայիճի, Բուրթելի և Բուղտայի	1308 թ.		4.2/14.6.2
Խաչքար՝ Ուլուխանի	1600 թ.		4.2/14.6.3
Վեհարան	1910 թ.		4.2/14.7
Տպարանի շենք	1771 թ.		4.2/14.8
Հուշարձան «Տրդատադուն»	17 դ.		4.2/14.9
Լիճ Ներսիսյան	1846 թ.		4.2/14.10
Հիվանդանոցի շենք	19 դ. վերջ		4.2/14.11
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1767 թ.	կենտրոնում (այսուհետև՝ կնտ)	4.2/15
Զանգակատուն	1767 թ.		4.2/15.1
Խաչքար	12 դ.		4.2/15.2
Խաչքար	1472 թ.		4.2/15.3
Խաչքար	16 դ.		4.2/15.4
Խաչքար	16 դ.		4.2/15.5
Խաչքար՝ Շիրվանի, Մարինեի և Ուլուբեկի	1581 թ.		4.2/15.6
Խաչքար	1596 թ.		4.2/15.7
Խաչքար	1655 թ.		4.2/15.8
Եկեղեցի Սբ. Գայանե	630 թ. - 20 դ.	հվ մասում	4.2/16
Խաչքար	10 դ.		4.2/16.1
Խաչքար	10 դ.		4.2/16.2
Խաչքար	10-11 դդ.		4.2/16.3

Խաչքար	10-11 դդ.		4.2/16.4
Խաչքար	12-13 դդ.		4.2/16.5
Խաչքար	12-13 դդ.		4.2/16.6
Խաչքար	15-16 դդ.		4.2/16.7
Խաչքար	15-16 դդ.		4.2/16.8
Գավիթ	1688 թ.		4.2/16.9
Խաչքար	11-12 դդ.		4.2/16.9.1
Խաչքար	11-12 դդ.		4.2/16.9.2
Խաչքար	12-13 դդ.		4.2/16.9.3
Խաչքար	1456 թ.		4.2/16.9.4
Խաչքար Հովհաննես Շահգառի	15-16 դդ.		4.2/16.9.5
Խաչքար Սարգսի	15-16 դդ.		4.2/16.9.6
Խաչքար Մարգարի	16 դ.		4.2/16.9.7
Խաչքար Ավագ խաթունի	1599 թ.		4.2/16.9.8
Խաչքար Ակոբի	1642 թ.		4.2/16.9.9
Գերեզման վարդապետ Ներսեսի	1651 թ.		4.2/16.9.10
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթափցու	1691 թ.		4.2/16.9.11
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Բ Մշեցու	1734 թ.		4.2/16.9.12
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ղազարի	1750 թ.		4.2/16.9.13
Գերեզման	1753 թ.		4.2/16.9.14

Ամենայն Հայոց կաթողիկոս Մինաս Ա Ակնեցու			
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցու	1762 թ.		4.2/16.9.15
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու	1780 թ.		4.2/16.9.16
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու	1799 թ.		4.2/16.9.17
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հովսեփ Արղությանի	1801 թ.		4.2/16.9.18
Գերեզման արքեպիսկոպ ոս Բարսեղի	1812 թ.		4.2/16.9.19
Գերեզման Սողոմոն Հովսեփյանի	1829 թ.		4.2/16.9.20
Գերեզման Ոսկի Էնակոփյանց ի	1829 թ.		4.2/16.9.21
Գերեզման Թովմա Հովսեփյանց - Ղորղանյանցի	1842 թ.		4.2/16.9.22
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս	1865 թ.		4.2/16.9.23

Մաթեոս Ա Կոստանդնու պոլսեցու (Զուխաճյան)			
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի	1938 թ.		4.2/16.9.24
Բնակելի տուն	19 դ.		4.2/16.10
Գերեզմանոց	10-20 դդ.		4.2/16.11
Գերեզման Վարդան Խաչատուրի Աբովյանի	1896 թ.		4.2/16.11.1
Գերեզման Սամսոն ՏԵՐ- Պողոսյանի (Խենթ)	1912 թ.		4.2/16.11.2
Գերեզման Սմբատ Գրիգորի Բորոյանի (Մախլուտո)	1956 թ.		4.2/16.11.3
Խաչքար	10 դ.		4.2/16.11.4
Խաչքար	10-11 դդ.		4.2/16.11.5
Խաչքար	12-13 դդ.		4.2/16.11.6
Խաչքար	14-16 դդ.		4.2/16.11.7
Խաչքար	15-16 դդ.		4.2/16.11.8
Գերեզմանոց	19-20 դդ.		4.2/16.12
Հուշաղբյուր՝ Աննիկ Դերձակյանի	1960-ական թթ.		4.2/16.13
Հուշաղբյուր 1915 թ. Մեծ եղեռնի զոհ կարնոհայությ անը	1983 թ.		4.2/16.14
Միաբանությ ան շենք	1880-ական թթ.		4.2/16.15
Խաչքար	1642 թ.		4.2/16.15.1
Նկուղ	1764 թ.		4.2/16.16

Ջրհոր	7 դ.		4.2/16.17
Եկեղեցի Սբ. Հովհաննես	618 թ.	Մեսրոպ Մաշտոց - Գր. Նարեկացի փ. խաչմերուկ	4.2/17
Խաչքար	9 դ.		4.2/17.1
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Փիլիպոս Հաղբակեցու	1655 թ.		4.2/17.2
Զանգակատուն	1790 թ.		4.2/17.3
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատու Կր Համադանցու	1725 թ.		4.2/17.3.1
Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Կարապետ Բ Ուլնեցու	1729 թ.		4.2/17.3.2
